ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918 ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

ԿԱՐԻՆԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karineal@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնների հիմնախնդրի լուսաբանման առումով կարեւոր է 1918ին թուրքերի կողմից բռնազաւթած հայկական տարածքներում ստեղծուած տեղական իշխանութեան եւ թուրքական իշխանութիւնների յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը:

Ալեքսանդրապոլի Գաւառում 1918ի թուրքական ռազմակալման շրջանում ստեղծուած տեղական իշխանութեան գործունէութեան գիտական ուսումնասիրութիւնը միտուած է յաղթահարելու թուրք-հայկական յարաբերութիւնների վերաբերեալ հայ պատմագիտութեան եւ հասարակական գիտակցութեան մէջ արմատացած մի շարք կարծրատիպեր: Մասնաւորապէս, խօսքը վերաբերում է Ալեքսանդրապոլի Գաւա-ռի բնակչութեան՝ թուրքերի դէմ չկռուելու, նրանց հետ համագործակ-ցելու վերաբերեալ արմատացած կարծիքներին:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1918ին թուրքական զօրքերն օգտուելով ռուսական զօրքերի բարոյալքումից եւ Կովկասեան ճակատի փլուզումից, անցնում են յարձակման՝ յայտարարելով, որ կը շարունակեն յարձակողական գործողութիւնները մինչեւ ռուսական զօրքերին հանդիպելը[1]:

Թուրքական զօրքերի առաջխաղացման պայմաններում, միաժամանակ շարունակւում են թուրքական հրամանատարութեան դիւանագիտական քայլերը[2]:

Մինչ հայ քաղաքական կուսակցութիւններն ու ազգային հասարակական կազմակերպութիւնները[3] Ապրիլի 6-8ը Ալեքսանդրապոլում տեղի ունեցած խորհրդակցութիւնում քննարկում էին Անդրկովկասի պաշտպանութեան հարցերը, Թուրքիայի հետ հաշտութեան պայմանները եւ ճշտում իրենց կեցուածքը պատերազմի եւ խաղաղութեան նկատ-

մամբ[4], թուրքերը դիւանագիտական խարդաւանքներով 1918 Մայիսի 15ին գրաւում են Ալեքսանդրապոլը[5]:

1918ի մայիսեան հերոսամարտերից յետոյ, ստիպուած լինելով հաշտուել Հայաստանի անկախութեան հետ, թուրքերը միաժամանակ ջանքեր չէին խնայում Արեւելեան Հայաստանի ռազմակալուած շրջաններում կոտորել եւ թալանել հայ բնակչութեանը, թուլացնել եւ տնտեսապէս քայքայել երկիրը՝ անհնար դարձնելով պետականութեան յետագայ գոյութիւնը Հայաստանում:

Թուրքերն իրենց առաջխաղացումը պայմանաւորելով իբր մահմեդականների նկատմամբ հայերի բռնութիւնները կանխելու եւ կարգուկանոն հաստատելու պատրուակով, եւ ընդհանրապէս, իրենց գործողութիւններին օրինական տեսք տալու նպատակով, այստեղ ձեռնամուխ են լինում տեղական իշխանութեան յառաջացմանը: Տեղական իշխանութիւնները ամբողջ վեց ամիս գործակցելով թուրքերի հետ, իրենց գործունէութեամբ փորձում են մեղմել թուրքական բռնութիւնները, հնարաւորինս աջակցել թուրքական քմահաճոյքին մնացած հայ բնակչութեանը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

1918 Մայիսի 15ին թուրքական անսպասելի յարձակումը մեծ խուճապ է առաջացնում Ալեքսանդրապոլում, որի հետեւանքով քաղաքը գրեթէ դատարկւում է: Քաղաքը խուճապահար լքում են ոչ միայն բնակիչների մեծ մասը, այլ նաեւ քաղաքային ինքնավարութեան ամբողջ կազմը, հասարակական, գաղթականական, դրամատնային, համագործակցական, մթերային բոլոր կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ քաղաքային ամբողջ ոստիկանութիւնն՝ իր կազմով[6]: Ընդ որում, քաղաքից հեռանում է նաեւ Ալեքսանդրապոլի հոգեւոր առաջնորդ Արտակ վարդապետը[7]: Ռազմաճակատի եւ կայազօրի զօրքերը քաղաքն ու բերդը յանձնելու պայմանների համաձայն, ետ են քաշւում ռազմաճակատից 20 վերստ հեռաւորութեամբ[8]:

Մի խօսքով, քաղաքը հիմնականում դատարկւում է եւ այստեղ մնացած ոչ-մեծաթիւ բնակչութիւնը, բնակարանները, պահեստները, առեւտրական եւ այլ շէնքերը մնում են թուրքական քմահաճոյքին:

Քաղաքում մնացած անպաշտպան բնակչութիւնը, ձգտելով ապահովել իր կեանքն ու գոյքը, թուրքերին ընդառաջ է ուղարկում մի պատուիրակութիւն Մկրտիչ Ղազարեանի[9] գլխաւորութեամբ: Թուրքերը խոստանում են չվնասել բնակչութեանը իրենց չդիմադրելու եւ քաղաքը չայրելու դէպքում[10]:

Չնայած կողոպուտներն ու միջադէպերը կանխելու թուրքական իշխանութեան ջանքերին՝ դրանք անխուսափելի էին: Քաղաքում կարգու-

կանոն հաստատելու նպատակով Մայիսի 17ին թուրքերի համաձայնութեամբ Ալեքսանդրապոլում կազմաւորւում են տեղական իշխանութեան մարմիններ՝ քաղաքային խորհուրդ եւ քաղաքային վարչութիւն:

Քաղաքային ինքնավարութիւն ստեղծելու նպատակով Լեւոն Սարգսեանը[11] Մայիսի 16ին ժողով է գումարում, որը սակայն սակաւամարդ լինելու պատճառով խորհրդակցական բնոյթ է կրում: Մայիսի 17ին գումարուած երկրորդ, աւելի մարդաշատ ժողովում, Սարգսեանը մանրամասն ներկայացնում է քաղաքում ստեղծուած իրավիճակը եւ քաղաքային ինքավարութիւն ընտրելու անհրաժեշտութիւնը: Ա. Բաբայեանն իր ճառում մեղադրելով քաղաքային իշխանութեան անդամներին՝ քաղաքը լքելու համար, առաջարկում է ընտրել նոր քաղաքային իշխանութիւն: Այնուհետեւ ներկայացւում է նախապէս կազմուած 29 թեկնածուների հետեւեալ ցուցակը՝ 1. Ա.Ի. Բաբայեան, 2. Պ.Լ. Մերկուրով, 3. Հաջի Եուսուֆ-Օղլի-Եուսուֆ, 4. Լ.Դ. Սարգսեան, 5. Գ. Ի. Տէր-Մարտիրոսով, 6. Թարիվերդիեւ Ալաշրաֆ, 7. Ի.Ա. Գուլբինսկի, 8. Քահանայ Կ. Իզոտով, 9. Ա.Պ. Չախմասազով, 10. Ս. Տէր-Գրիգորեան, 11. Մամէդօղլի Ջաֆար, 12. Ա.Ս. Ցիխիստով, 13. Մ. Ղազարեան, 14. Ա.Ա. Լէյբովիչ, 15. Դ.Կ. Պոպանդապուլօ, 16. Խ.Ս. Ստեփանեան, 17. Բաբուրով, 18. Վ.Մ. Ղուրբատով, 19. Ա.Յ. Լեւին, 20, Մուղզինարով, 21. Կալերով, 22. Ա.Ս. Աւետիքեան, 23. Կ.Վ. Աբովեան, 24. Ս. Ի. Մուբայաղջով, 25. Քահանայ Տէր-Գրիգորեան, 26. Մ.Ս. Պօղոսեան, 27. Կ.Օ. Ապոեւ, 28. Գ. Փեշտմալջեան, 29. Աբաջեան:

Ժողովը ելնելով այն փաստից, որ մեծ թուով մարդկանց առկայութեան եւ մեծ մասի անգրագիտութեան պայմաններում հնարաւոր չէ ո՛չ բանաւոր եւ ո՛չ էլ գրաւոր ընտրութիւններ կատարել, ներկայացուած 29 հոգու ցուցակը, (16 հայ, 3 ռուս, 3 մահմեդական, 2 վրացի եւ երկու հրեայ), համարում է ժողովի վստահութիւնը ստացած եւ առաջարկում նրանց՝ իրենց շարքից, գաղտնի քուէրակութեամբ ընտրել քաղաքային վարչութեան 15 անդամների, իսկ մնացած 14ն ընտրուած 15ի հետ կազմելու էին քաղաքային խորհուրդը: Ընտրուած քաղաքային վարչութիւնը պատասխանատու էր լինելու թուրքական կառավարութեան առաջ եւ վարելու էր քաղաքային գործերը:

Ժողովի որոշման համաձայն գաղտնի քուէարկութիւն է իրականացւում, որի արդիւնքում ընտրւում են հետեւեալ 15 հոգին՝ 1. Ա.Ի. Բաբայեան, 2. Պ.Լ. Մերկուրով, 3. Հաջի Եուսուֆ-Օղլի-Եուսուֆ, 4. Լ.Դ. Սարգսեան, 5. Գ.Ի. Տէր-Մարտիրոսով, 6. Թարիվերդիեւ Ալաշրաֆ, 7. Ի.Ա. Գուլբինսկի, 8. Քահանայ Կ. Իզոտով, 9. Ա.Պ. Չախմասազով, 10. Ս. Տէր-Գրիգորեան, 11. Մամէդօղլի Ջաֆար, 12. Ա.Ս. Ցիխիստով, 13. Մ. Ղազարեան, 14. Ա.Ա. Լէյբովիչ, 15. Դ.Կ. Պոպանդապուլօ: Քաղաքային վարչութեան նախագահ է ընտրւում Լեւոն Սարգսեանը, օգնականներ՝ Պ. Մերկուրովը

եւ Հաջի Եուսուֆ-Օղլի-Եուսուֆը, քարտուղար՝ Ցիխիստովը, թարգմանիչ՝ Մուբայաջեանը[12]:

Քաղաքային վարչութիւնը Օսմանեան Կայսրութեան իշխանութիւնների համաձայնութիւնը ստանալուց յետոյ, անմիջապէս անցնում է գործի: Թուրքական բռնակալման պայմաններում ստեղծուած իշխանութեան այդ մարմինները, գործելով այնքանով, որքանով որ նրանց հնարաւորութիւն էին տալիս թուրքական իշխանութիւնները, բնականաբար չէին կարող զերծ մնալ թուրքերի ազդեցութիւնից: Բայց դրանով հանդերձ, նրանք փորձում են հնարաւորութեան սահմաններում մեղմել թուրքական բռնութիւնները եւ կանխել անիշխանութիւնը:

Քաղաքային վարչութեան իրաւունքներն ու գործառոյթները շատ լայն էին ու բազմակողմանի: Նրան էին ենթարկւում ոչ միայն քաղաքի վարչական, տնտեսական ուսումնական կեանքը, այլեւ գաւառինը՝ ամբողջապէս[13]:

Քաղաքային գործերը վարելու համար քաղաքային խորհուրդն ընտրում է հետեւեալ կոմիսարներին.- բոլոր հարցերի վերաբերեալ, իշխանութեան հետ յարաբերութիւններ պահպանող, քաղաքի պահպանութեան (ոստիկանութեան պետի հետ միասին), գաւառային գործերի, առողջապահական մասի, բժշկական հիմնարկութիւններ կառավարող, ապաստարանների եւ բոլոր խնամակալական հիմնարկութիւնները կառավարող, պարենաւորման գործի, ազգաբնակչութեան, դատարկման եւ արտագաղթի, քաղաքացիների միջեւ ծագած բոլոր իրաւաբանական բնոյթ կրող վէճերի քննութեան, առեւտրական գործերի, դրամական, համագործակցական խանութների, բոլոր տեխնիկական խնդիրների, վերստուգիչ, ազգաբնակչութեան ցուցակագրման եւ ընդհանուր ղեկավարութեան:

Քաղաքային վարչութեան որոշմամբ քաղաքային վարչութեան նիստերը տեղի էին ունենում ամէն օր, բացի Կիրակի եւ տօն օրերից, իսկ խորհրդի նիստերը՝ շաբաթը երկու անգամ, Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերին[14]:

Յունիսի 26ին քաղաքային վարչութիւնը վերակազմաւորւում է՝ քաղաքային վարչութեան բոլոր գործերը կենտրոնացւում է մէկ ընդհանուր ղեկավարութեամբ հինգ հետեւեալ բաժիններում՝ ֆինանսա-տնտեսական (Տէր Մարտիրոսով), վարչական (Ս. Ղազարեան), սանիտարաբժշկական (Ցիխիստով), տեխնիկական (Չախմասազով) եւ պարենաւորման (Եուսուֆով)[15]: Նշուած բոլոր բաժինները ունէին իրենց ենթաբաժինները: Բոլոր բաժինների ընդհանուր ղեկավարը ժողովի կողմից ընտրուած քաղաքագլուխն էր (Սարգսեան): Բոլոր կարեւոր խնդիրները վարչութեան մէջ վճռւում էին խմբային կերպով, իսկ խորհրդի վճիռ պահանջող հարցերը մտցւում էին խորհուրդ:

Ալեքսանդրապոլի գաւառը ժամանակաւորապէս բաժանւում էր գիւղախմբերի (հին սահմաններով)։ Քաղաքային ինքնավարութեանն էին ենթարկւում նաեւ գաւառի վարչական պաշտօնեաները՝ բաշ-մուխտարները (գիւղախմբի համար) ու մուխտարները (իւրաքանչիւր գիւղի համար), որոնք փաստօրէն նշանակւում էին քաղաքային վարչութեան համաձայնութեամբ եւ ընդունւում՝ թուրքական իշխանութեան կողմից։

Քաղաքային ինքնավարութիւնն անմիջապէս ենթարկւում էր տեղական իշխանութեան նախագահին՝ Ռեջէբ բէյին, իսկ վերջինս իր հերթին՝ թուրքական բանակի հրամանատարին (Ղարսի զօրահրամանատար՝ Շեւքի փաշային)[16]։

Թուրքական իշխանութիւնները քաղաքին ու գաւառին վերաբերող բոլոր տեսակի կարգադրութիւններն անում էին քաղաքային ինքնավարութեան միջոցով եւ նրա միջոցով էլ ընդունում բոլոր խնդրագրերը։ Տեղական թուրքական կառավարութեան նախագահ Ռեջէբ բէյը 1918 Յունիսին Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութեանն ուղղուած գրութեամբ յանձնարարում է ժողովրդին յայտարարել հետեւալը. «Շատ գործերի մասին ժողովուրդը խնդիր է տալիս ուղղակի բանակի հրամանատարին, քանի որ նախ պէտք է դիմել տեղական կառավարութեանը, ուստի այդ կարգի դիմումները հրամանատար փաշայի կողմից չեն ընդունուի։

Այնուհետեւ թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական գործերի վերաբերեալ նախ պէտք է [դիմել] եւ խնդիր ներկայացնել տեղական կառավարութեանը, առանձին կարիքի դէպքում՝ միայն պէտք է դիմել եւ խնդիր ուղարկել բանակի հրամանատարին, տեղական կառավարութեան միջոցով»[17]։

Յուլիսի 2ից քաղաքային վարչութեան անդամներին նշանակւում է աշխատաւարձ՝ օրական 12 ռուբլի, իսկ քաղաքագլխին՝ օրական 15 ռուբլու չափով։ Աշխատավարձ է նշանակւում նաեւ ծառայողներին։ Քաղաքային վարչութեան տրամադրութեան տակ են դրւում 7 ոստիկաններ եւ գիշերապահներ։ Քաղաքի գրաւման սկզբից քաղաքում եւ գաւառում կարգը պահպանւում էր զօրքի, իսկ յետագայում՝ գիշերապահների եւ ոստիկանների կողմից, որոնք ենթարկւում էին տեղական իշխանու-թեան նախագահին։ Ամէն թաղ ունէր 5-6 գիշերապահ, որոնց վարձատ-րում էր թաղը։ Քաղաքը բաժանւում էր 6 մուխտարութեան։ Մուխտար-ները նշանակւում էին քաղաքային վարչութեան կողմից եւ ստանում օրական 5 ռուբլի աշխատավարձ։ Քաղաքային վարչութեանն էին են-թարկւում քաղաքի եւ գաւառի բոլոր տիպի դպրոցները, որոնք ազգայ-նացւում են ծխական դպրոցների ծրագրով. դասաւանդութիւնը լինելու էր մայրենի լեզուով, միայն չորրորդ դասարանից մտցուելու էր թուրքերէնի դասաւանդում։

Տեղական իշխանութեան մարմիններն օգտուելով թուրքական դիւանագիտութեան ընձեռած հնարաւորութիւններից փորձում էին պաշտպանել հայ բնակչութեան շահերը, զսպել թուրքական բռնութիւնները, ապահովել նրա ֆիզիկական գոյութիւնը: Իսկ թուրքական դիւանագիտութիւնը վեց ամիսների ընթացքում բազմիցս փոխւում է՝ հայերին իսպառ բնաջնջելու ծայրայեղութիւնից վերածուելով «հայասէրի» համբաւ հանելու ծայրայեղութեանը[18]:

Մինչեւ 1918 Սեպտեմբերի 8ը, երբ Ալեքսանդրապոլում հաստատւում է Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչութիւնը, թուրքե-րի հետ յարաբերութիւնները կարգաւորւում էին բացառապէս տեղական իշխանութեան վերոյիշեալ մարմինների միջոցով:

Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ Գ. Խոյեցեանը Արտգործնախարարութեանն ուղղուած իր զեկուցագրում, անդրադառնալով քաղաքային իշխանութիւնների գործունէութեանը, գրում է. *«Քաղաքային ինքնավարութիւնը միջնորդութիւններ է յարուցում, շատ անգամ բարեյաջող հետեւանքով, այնպիսի խնդիրների վերաբերմամբ, որոնք ունենալով պետական լայն նշանակութիւն իր իրաւասութեանը ենթարկուել չեն կարող, ինչպէս օրինակ գերիների, պետական հիմնարկութիւնների, էւակուացիայի, փախստականների վերադարձի, հարկերի եւ այլն եւ այլն»*[19]:

Տեղական իշխանութիւնների առաջնային խնդիրներից էին փախստականների վերադարձն ապահովելը եւ կեանքը բնականոն հունի մէջ դնելը:

Թուրքերն իրենց առաջխաղացումը պայմանաւորելով իբր թէ խաղաղութիւն եւ կարգուկանոն պաշտպանելու պատրուակով եւ հանդէս գալով տարածաշրջանում քաղաքակրթութիւն տարածողների դերում, արտաքնապէս չէին խրախուսում գաղթը: Սակայն իրականում նրանք թոյլ չէին տալիս փախստականներին ետ վերադառնալ իրենց բնակութեան վայրերը: Այսպէս, երբ Ալեքսանդրապոլը գրաւելու ժամանակ քաղաքից փախած բնակչութիւնը Արտակ վարդապետի գլխաւորութեամբ պատուիրակութիւն է ուղարկում փաշայի մօտ՝ խնդրելով իրենց վերադառնալու հնարաւորութիւն տալ, վերջինս մեղադրելով նրանց քաղաքից փախնելու համար, մերժում է, խոստանալով երեք օրից միայն թոյլատրել[20]:

Սակայն նման մտադրութիւն թուրքերը բնաւ չունէին. Ընդհակառակը պատրաստւում էին յարձակուել Ղարաքիլիսայի վրայ: Հասկանալով, որ Ղարաքիլիսայում գտնուողները հիմնականում ունեւոր խաւը եւ երիտասարդներն էին, նրանք փորձում էին համոզել վերջիններիս, որ չփախչեն: Հայ բնակչութեան փախուստը կանխելու համար թուրքերը պատուիրակութեանը ցոյց են տալիս, որ այստեղ կազմակերպուած են

տեղական իշխանութեան մարմիններ եւ հաւաստիացնում, որ նրանց Ալեքսանդրապոլում ոչ մի վտանգ չի սպառնում:

Թուրքերի կողմից գաղթը չխրախուսելու փաստի մասին է վկայում նաեւ 1918 Մայիսի 15ին Արամի, Դրոյի, Վրացեանի եւ Ղազազեանի միջեւ Բաթումի բանակցութիւնների ընթացքի մասին հեռախօսային խօսակցութիւնը, որտեղ ներկայացւում է թուրքերի վերջնագիրը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգիծը իրենց զիջելու եւ երկաթուղուց 20 վերստ հայկական զօրքերը ետ քաշելու պահանջի մասին եւ նշւում, որ թուրքերը խնդրել են խաղաղ բնակչութեանը՝ մնալ տեղում[21]:

Թուրքերը, մի կողմից դիւանագիտական խարդաւանքներով գրաւելով Ալեքսանդրապոլը՝ անօրինակ խուճապ են առաջացնում խաղաղ բնակչութեան մէջ, ստիպելով լքել իրենց բնակավայրերը, միւս կողմից՝ տպաւորութիւն ստեղծում, թէ չեն խրախուսում գաղթը: Նախապէս յայտարարելով, որ իրենք չեն վնասի խաղաղ բնակչութեանը, այլ միայն գաղթականներին ու դաշնակցականներին, որոնք իբր յանցագործութիւններ են կատարել մահմեդական բնակչութեան նկատմամբ, նրանք պառակտում են հայ հասարակութեանը, զրկում նրան դիմադրական կարողութիւններից: Բացի այդ, բնակչութեան տեղում մնալը, բնականաբար, թուրքերին հնարաւորութիւն կ'ընձեռէր թալանել նրանց օրինական միջոցներով:

Սակայն թուրքերի կողմից գաղթը չխրախուսելու պատճառներից անկախ, միանշանակ գաղթի կասեցմամբ շահագրգռուած էին նաեւ հայկական շրջանակներում:

Եթէ արեւմտահայերը գաղթելով փրկուել էին ինչ որ կերպ եւ հասել իրենց արեւելահայ եղբայրների մօտ եւ նրանց աջակցութեամբ կեանքի ու մահու պայքար էին մղում, ապա արեւելահայերը ուղղակի գաղթելու տեղ չունէին եւ, միանալով արեւմտահայ գաղթականութեան հոսանքին, գնում էին ստոյգ կործանման:

Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդը Ղարաքիլիսայի բնակչութեան գաղթը դադարեցնելու անհրաժեշտութեան մասին 1918 Մայիսի 23ի իր կոչում գրում է. *«Տաճիկները գրաւել են Ղարաքիլիսէն: Կորպուսի շտաբը տեղափոխուել է Դիլիջան: Նոյն օրն իսկ Դիլիջանից ահագին գաղթականութիւն սկսուել է դէպի Նոր Բայազէդի գաւառը: Ախտայից յայտնում են, որ այդ շրջանում կուտակուել է հարիւր հազարանոց գաղթականութիւն, որը խելակորոյս, սոված, ծարաւ թափառում է սարերում: Նրանց դրութիւնը սոսկալի է: Նոյնիսկ շատ տեղերում գաղթականների մէջ արիւնալի դէպքեր են տեղի ունենում: Հենց այս րոպէիս հացի պա-կաս է զգացւում:*

Պարզ է, որ գաղթելու տեղ չկայ եւ գաղթը միանգամայն կորստաբեր է:

Իմացէք եւ հետեւեալը: Երբ որ տաճիկները մի որեւէ տեղ տիրապետում են, այն տեղից փախած ժողովրդին նրանք այլեւս թոյլ չեն տալիս վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Ուրեմն երկու չարիքից ամենափոքրագոյնը այն է, որ ժողովուրդը չգաղթի եւ մնայ իր տեղերում»[22]:

Սակայն բանակչութեան գաղթը կասեցնելը գրեթէ անհնար եղաւ: Նախ, թուրքերի անակնկալ յարձակման, ապա նաեւ թուրքական ցեղասպան քաղաքականութեան հետեւանքներն իրենց մաշկի վրայ զգացած արեւմտահայ գաղթականութեան եւ այդ գաղթականների անլուր տառապանքներին չորս տարի ականատես եղած տեղի բնակչութեան մէջ արմատաւորուել էր թուրքից ամէն կերպ փրկուելու հոգեբանութիւնը; Ժամանակի հասարակական գիտակցութեան մէջ թուրքն ընկալւում էր որպէս ցեղասպան, հետեւաբար ընդունելի էր համարւում ինչ որ կերպ թուրքական բռնութիւններից փրկուելու միտքը:

Ցեղասպանութեան անմիջական հետեւանք հանդիսացող գաղթականութիւնն իր կնիքն էր դրել Ալեքսանդրապոլի ոչ միայն տնտեսական, քաղաքական, այլ նաեւ բարոյահոգեբանական իրավիճակի վրայ: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին այստեղ ապաստանած բազմահազար գաղթականութիւնն իր անհուն տառապանքով, հոգեբանօրէն չէր կարող չազդել Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան վրայ:[23]

Հետեւաբար նորաստեղծ քաղաքային վարչութեան գործունէութեան առաջնահերթ խնդիրը գաղթը կասեցնելը եւ փախստականների վերադարձն ապահովելն էր: Մանաւանդ, որ թուրքերը գտել էին գաղթողներին թալանելու ձեւը եւ դա անում էին 'օրինական' միջոցներով: Թուրքական իշխանութիւնները օրէնքով քաղաքից բացակայողների ունեցուածքը համարում էին պետական, եւ սեփականացնում այն:

1918 Յունիսի 4ի Բաթումի Պայմանագրի կնքումից յետոյ քաղա-քային վարչութիւնը ամէն հնարաւոր միջոցներով ձգտում էր օժանդակել փախստականների վերադարձին եւ իրենց գոյքի տիրանալուն:

Թուրքերն իրենց առաջխաղացումը Արեւելեան Հայաստանում պայմանաւորելով իբր գրաւուած տարածքներում կարգուկանոն հաստատելու եւ մահմեդականներին պաշտպանելու հետ, պնդում էին, թե իրենցից կարող էին վախենալ միայն այն հայերը, ովքեր անօրինութիւններ եւ բռնութիւններ էին իրականացրել մահմեդական բնակչութեան նկատմամբ: Փախստականներին թուրքերն անուանում էին 'դաչաղներ' եւ քաղաքից բացակայողների ունեցուածքը համարելով պետական՝ սեփականացնում այն: *«Թէեւ ըստ Բաթումի դաշնագրի ոչ ոք չի զրկւում իր սեփականութեան իրաւունքից,*- գրում է Գ. Խոյեցեանը,- *բայց օսմանեան իշխանութիւնը քաղաքի գրաւման օրը քաղաքից բացակայողների գոյքը*

գրաւում է յօգուտ պետութեան: Սեփականատէր ճանաչում է միայն այն մարդը, որի անունը նշանակուած է քաղաքի ստացուածոց մատեանում իբրեւ այդպիսին, նոյնիսկ ծնողների, որդոց կամ ընտանիքի այլ անդամների ներկայութիւնը կամ քաղաքի գրաւումից շատ առաջ քաղաքից հեռանալու պարագան չեն փրկում գոյքը գրաւումից: Տանում են ամբողջ շարժական գոյքը, իսկ շէնքը տալիս են վարձով կամ կապալով: Այդ բանը նրանք բացատրում են հետեւեալ կերպով . «Ռուսները հեռացել էին Անդրկովկասից մօտաւորապէս 1918թ. սկզբին: Այդ ժամանակամիջոցից յետոյ քաղաքից հեռանալը չպէտք է դիտել իբրեւ տաճիկների գալուց երկիւղի հետեւանք, ուստի եւ Յունուարից այս կողմ հեռացողների գոյքը իբրեւ պատիժ պէտք է գրաւուի, իսկ Յունուարից առաջ հեռացողներինը՝ ոչ: Տեղի իշխանութեան նախագահի կարգադրութեամբ անշարժ կայքերից վերցուող հարկը տալու համար ամէն մի ստացուածատէր Քաղաքային վարչութիւնից պիտի ստանայ վկայագիր, որ ինքը նշանակուած գոյքի տէրն է, իսկ եթէ հաւատարմատարն է՝ հաւատարմաթուղթը տրուած 1918թ. առաջ: Ով բացակայում է քաղաքից, կամ նոր է վերադարձել, այդպիսիներին կալուածքից հարկ չի տրւում: Քաղաքային վարչութիւնը ներկայացրել էր քաղաքի գրաւումից առաջ հեռացողների ցուցակը, բայց այդ ցուցակը չէր ընդունուել իբր՝ 'դաչաղների':

Այդպիսիների գոյքը կառավարութիւնը տալու է վարձով կամ կապալով յօգուտ իրեն»[24]:

Երբ այս առթիւ ՀՀ Արտաքին Գործերի Նախարարութեան ներկայացուցիչը հարցում է անում Խալիլ փաշային եւ տեղական իշխանութեան նախագահին, վերջիններս պատասխանում են, որ այդ արւում է Շեւքի փաշայի կարգադրութեամբ, եւ քաղաքը Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնելուց յետոյ կը վերադարձուեն ե՛ւ հարկը ե՛ւ վարկը ե՛ւ ստացուած կապալագինը: Միայն Նոյեմբերի 14ին է թուրքական կառավարութիւնը ճանաչում քաղաքից բացակայողների անշարժ եւ շարժական գոյքի սեփականութեան իրաւունքը եւ այդ գոյքը յանձնւում տէրերին[25]:

Բայց մինչ այդ քաղաքային վարչութիւնը փորձում էր վերադարձողների տները վերցնել թաթարներից եւ յանձնել հայերին: Փաստօրէն քաղաքային վարչութիւնը հանդէս էր գալիս բնակչութեան եւ թուրքական իշխանութիւնների միջեւ միջնորդի դերում: Մասնաւորապէս քաղաքային վարչութեան Յունիսի 25ի նիստում վարչական բաժնի ղեկավար Մ. Ղազարեանին յանձնարարւում է խնդրել Ռեջէբ-բէյին կարգադրութիւն անել դատարկել քաղաք վերադարձած հայերի տները թաթարներից: Իսկ փակ դռները նախատեսում էին բացել վարչութեան անդամների եւ տանտիրոջ ներկայութեամբ:

Յունիսից կեանքը մտնում է բնական հունի մէջ, քաղաքային վարչութեան միջնորդութեամբ բացւում են ճաշարաններ, ռեստորաններ, հիւրանոցներ, հասարակական սննդի կենտրոններ, խանութներ: Հայերի հետ այդ վայրերը գործարկում էին թաթարները: Քաղաքը գրաւած շատ թաթարներ առաջարկում էին բացել քաղաքից հեռացած հայերի խանութները, վարձակալական հիմունքներով՝ խոստանալով վերադարձնել դրանք տէրերի քաղաք վերադառնալու ժամանակ: Մասնաւորապէս, Բաշիր Եուսուֆովը Յունիսի 28ի նիստում դիմում է վարչութեանը, խնդրելով թոյլատրել օգտագործել Չոլախովի խանութը, խոստանալով վճարել քաղաքային վարչութեան եւ վերադարձնել խանութը Չոլախովի գալու ժամանակ[26]: Վարչութիւնը համաձայնում է տալ խանութը Եուսուֆովին նշուած պայմաններով օգտագործելու համար, եւ յայտնելով այդ մասին նահանգապետ Ռեջէբ բէյին, խնդրել նրան, որ խանութները եւ տաղավարները տրուեն վարձու միայն վարչութեան թոյլտուութեամբ[27]:

Քաղաքային վարչութիւնը ջանքեր չի խնայում հայ բնակչութեան հարկերը թեթեւացնելու ուղղութեամբ: Թէեւ 1918ին Շիրակում առատ բերք էր ստացուել, բայց ցանքսերի մեծ մասը փչացել էր գաղթի ժամանակ, միւս մասերին տիրացել էին քրդերն ու թաթարները, մի մասն էլ փչացրել էր կարկուտը: Իսկ մնացածից էլ հաւաքում էին *մուբայա*ն ու *աշար*ը: Օսմանեան կառավարութեան որոշմամբ թուրքերի կողմից ռազմակալուած վայրերում գիւղացիները իրենց բերքի երեք ութերորդը պէտք է յանձնէին կառավարութեանը, մէկ ութերորդը՝ իբրեւ *աշար*, իսկ երկու ութերորդը՝ զօրքի կարիքների համար (*մուբայա*), վաճառելու կառավարութեանը որոշուած գնով, մէկ փութ ցորենը՝ 33 ռուբլով, իսկ գարին՝ 16 ռուբլով:

Օրթաքիլիսա գիւղի բնակիչները Օգոստոսի 17ի գրութեամբ խնդրում են քաղաքային ինքնավարութեանը՝ միջնորդել թուրքական կառավարութեան, իրենց հարկերից ազատելու համար[28]: Նման խնդրանքով գաւառի մի շարք գիւղերի նոյն օրը եւ նոյն բովանդակութեամբ գրութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ գոյութիւն ունէր որոշակի պայմանաւորուածութիւն քաղաքային ինքավարութեան եւ գիւղական հասարակութիւնների միջեւ: Այդօրինակ դիմումներից Համամլու գիւղի հասարակութեան դիմումում կարդում ենք. *«Մորանով պատիւ ունենք յայտնելու Չերդ Մեծայարգութեանը, համաձայն ներկայ տիրող կառավարութեան հրամանի ու կարգադրութեան հիման վրայ մեր գիւղացիք պարտաւոր են վճարել հացահատիկ հաւաքածներից հետեւեալ տուրքերն՝ 8ից մէկը բայրա, կոտը՝ զինուորին, մի կոտը չքաւորներին, որի հաշուով ուղիղ կէսը մնում է գիւղացիներին:*

Մեր հասարակութիւնը, որ բաղկացած է մօտաւորապէս 500 ծխից, դորա դէմ հակառակ չէ, բայց աչքի առաջ ունենալով, որ մեր գիւղի բոլոր հանդերը, թէ՛ խոտատեղը, թէ՛ ցանկատեղանքները, գտնուելով պատերազմական դաշտի մէջ բոլորը տրորած ու փչացած է, որով պէտք է քաղէին, մօտաւորապէս 10 կտոր, հիմա պէտք է վերցնէ մէկ կտոր կոտ, կան շատ գերդաստաններ, որոնք զրկուած են իրենց ստանալիք բերքից: Մեր ժողովուրդը չափից դուրս տուժուել է կռուի դաշտ լինելու պատճառով, հետեւաբար աղքատութեան մէջ է:

Այս հիման վրայ դիմում ենք Ձերդ մեծարգոյութեանը, խնդրում ենք աչքի առաջ ունենալ, որ մեր գիւղի ցանած հանդերը տրորած ու փչացրած է, մեր գիւղը զօրք լինելու պատճառով: Նամանաւանդ, որ վերջին օրերս սաստիկ կարկուտ գալով բոլորը կարկտահար եղաւ, այնպէս, որ մեր ժողովուրդը անտանելի նեղ դրութեան մէջ է, չի կարող իւրեանց գերդաստանի համար հաց ձեռք բերէ, կարող է սովամահ լինի, եթէ այդ յիշեալ տուրքը վճարէ:

Որոյ մասին խնդրում ենք Ձերդ մեծայարգութեանը անել տնօրինութիւն, միջնորդէք Նոր կառավարութեան առաջ խնայել մեր ժողովրդին, գոնէ այս տարի չպահանջէ յիշեալ տուրքերը, եթէ ոչ սովամահ կը լինեն բոլորը: Ձեր արած բարիքներով ազատած կը լինէք հազարաւոր անձինք սովամահից»[29]:

Հարկ է նշել, որ քաղաքային վարչութեան բոլոր դիմումները որոշ գիւղերից *մուբայա*ն ու *աշար*ը չվերցնելու վերաբերեալ, Շեւքի փաշայի կտրուկ հրամանով, մնում էին անհետեւանք: Աւելին, կարգադրւում է հաւաքել այդ երեք ութերորդից մէկ ութերորդն էլ հասարակական ամբարների համար: Սակայն քաղաքային վարչութեան դիմումի համա-ձայն դա ներւում է:

Սկզբում գիւղացիները փորձում են թաքցնել բերքը, սակայն դաժան ծեծի են ենթարկւում եւ գրաււում է ամբողջ բերքը: Կարկուտի խփած տեղերում հարկի երեքութերորդը որոշում են ծղոտի չափով: Բոլորովին բերք չունեցողներից վերցնում են դրամով: Բերքի այս հաւաքման մէջ մեծ դեր են կատարել հայ *մուխտար*ներից եւ *բաշմուխտար*ներից շատերը, որոնք պայմանաւորուելով *ասկեար*ների հետ շատ դէպքերում վերցրել են գիւղացիներից ամբողջ բերքը լցրել իրենց ամբարները կամ ծախել: Գիւղացիները ստիպուած են եղել կաշառք տալ նրանց, շաբաթներով կերակրել նրանց անասուններին իրենց հաշուին եւն.[30]:

Շատ դէպքերում քաղաքային վարչութեան դիմումները մնացել են անպատասխան եւ միայն քաղաքական դրութեան փոփոխութեան հետ ներուել է *մուբայա*ն եւ յետոյ այն գիւղերի *աշար*ը, որոնք մինչ այդ դրանք չեն տուել: Հայաստանի Հանրապետութեան Արտգործնախարութեանն ուղղուած զեկուցման մէջ ներկայացնելով այս ամէնը՝ Խոյեցեանը բարձր

է գնահատում քաղաքային վարչութեան ներկայացուցիչ Ղազարեանի դերը, գրելով, *«Այս կարգադրութիւնից յետոյ շատ տեղերում զապութներն ու ժանդարմները փորձում են հաւաքել մուբայան, սակայն ամէն անգամ դիմել եմ Տեղական իշխանութեան նախագահին նրա համապատասխան կարգադրութիւն ուղարկել տուել այդ գիւղերը եւ ազատել մուբայան, որը տանելուց յետոյ վերադարձնել չէր լինի: Այսպիսով ազատուել է միայն Մաստարա գիւղում ամբարած երեսուն հազար փութ հացահատիկը:*

Անգնահատելի է այս խնդրում քաղաքային վարչութեան եւ մասնաւորապէս վարչութեան անդամ Մկրտիչ Ղազարեանի դերը: Նա շարունակ դիմել է, խնդրել, շրջել գիւղերը, քննել ապօրինութիւնները, հեռացնել տուել ապիկար պաշտօնեաներին»[31]:

1918 Օգոստոսի 20ին Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութիւնը գրութեամբ դիմում է Գիւմրու նահանգապետին առանց վարչութեան կարգադրութեան քաղաքացիների եւ հաստատութիւնների իրերը չվերցնելու վերաբերեալ[32]:

Քաղաքային իշխանութիւնները մեծ ծաւալի աշխատանքներ են տանում գիւղական բնակչութեանը անխուսափելի սովից փրկելու համար: Մասնաւորապէս, քաղաքային վարչութիւնը դիմում է Ռեջէբ բէյին խնդրելով ձրի հաց տալ այն գիւղացիներին, որոնք վերադառնալով իրենց տները՝ գտել էին այն լիովին թալանուած վիճակում:

Հաշուի առնելով որ Վեհիբ փաշան առաջարկել էր ընտրել քաղաքից ներկացուցիչներ՝ Ռուսաստան մեկնելու եւ հաց գնելու, քաղաքային վարչութիւնը որոշում է խնդրել Օսմանեան իշխանութիւններից այդ ներկայացուցիչներին ուղարկել հարեւան Ելիզաւետպոլի Նահանգ մթերային գնումների համար: Եւ նկատի առնելով հարցի կարեւորութիւնը՝ որոշւում է այն դնել խորհրդի քննարկմանը[33]:

Օգոստոսի 27ին Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի որոշմամբ, խորհրդի նախագահ Սարգսեանը գործուղւում է Թիֆլիս իրականացնելու քաղաքային խորհրդի յանձնարարութիւնը՝ վերադարձնելու հին քաղաքային վարչութիւնից քաղաքային եւ հասարակական գումարները, որոնք նրանք տարել էին իրենց հետ՝ թուրքերի քաղաք մտնելուց առաջ[34]:

Նոյն Օգոստոսի 27ին Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է քաղաքի համար հաց գնելու նպատակով պատգամաւորներ Փեշտմալջեանին եւ Եուսուֆ Զադէին Ելիզաւետպոլի Նահանգ գործուղել[35]:

1918 Սեպտեմբերից թուրքերն զգալով պատերազմում իրենց մօտալուտ պարտութիւնը, փոխում են քաղաքականութիւնը հայերի նկատմամբ, այլ ելք չունենալով՝ քան հայերի հետ հաշտուելը եւ բարեկամ ձեւանալն ու որպէս այդպիսին ներկայանալը ընդհանուր հաշտութեան

սեղանին: *«Հայերու վերաբերմամբ այնքան դաժան ու անողոք քաղաքականութիւնը հիմա մէկէն կը փոխուէր եւ կը դառնար ջերմ, սիրալիր բարեկամութեան եւ ամէն ջանք գործ կը դրուէր օր առաջ հայերու հետ խնդիրը կարգադրել եւ 'թեւանցուկ, ինչպէս իրենք կ'ըսէին, մտնել ընդհանուր ժողովասրահը'»*[36]:

Այս փոփոխութեան արդիւնքում 1918 Սեպտեմբերի 8ից Ալեքսանդրապոլում հաստատուած Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ Խոյեցեանը, գործակցելով տեղական իշխանութեան մարմինների հետ, փորձում է յաղթահարել թուրքական բռնութիւնների հետեւանքները, վերականգնել տեղի հայ բնակչութեան բնականոն կեանքը[37]:

1918 Հոկտեմբերի կէսերին օսմանեան կառավարութիւնը, որի գլուխ կանգնած էին երիտթուրքական կուսակցութեան ղեկավարները, հրաժարական է տալիս: Նոր կառավարութիւնը Իզզէթ փաշայի գլխաւորութեամբ շտապում է իր զօրքերը Անդրկովկասից մինչեւ Բրեստ Լիտովսկի Պայմանագրով հաստատուած սահմանները դուրս բերելու մասին որոշում ընդունել: Սակայն, թուրքերն իրենց յատուկ քաղաքականութեամբ երկար ժամանակ ձգձգում էին այն իրականացնել՝ մինչեւ վերջին հնարաւորութիւնը թալանելու եւ կոտորելու հայ բնակչութեանը: Իրենց հերթին տեղական իշխանութիւնները փորձում են օգտուել ստեղծուած քաղաքական նոր իրավիճակից, վերականգնել քաղաքի բնականոն կեանքը: Մասնաւորապէս, Ալեքսանդրապոլի քաղաքային դպրոցների տեսուչ Ա. Բաբայեանը Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչին ուղղած 1918 Հոկտեմբերի 22ի գրութեամբ խնդրում է դպրոցական կեանքը վերականգնելու համար ապահովել հմուտ ուսուցիչների վերադարձը Թիֆլիսից եւ Երեւանից. *«Յանկանալով տեղիս քաղաքային դպրոցների համար փորձուած ուսուցիչներ հրաւիրել, խնարհաբար խնդրում եմ Ձեր կարեւոր միջնորդութեամբ աջակցել՝ որքան կարելի է շուտ եւ ապահով Ալեքսանդրապոլ վերադառնալուն ներկայումս Թիֆլիսում գտնուող Տիգրան Յակոբեանին եւ Երեւանում գտնուող Մնացական Տէր-Մարտիրոսեանին, որոնք անձամբ յայտնի են ինձ իրենց ուսուցչական բազմամեայ փորձառութեամբ»*[38]:

Փաստօրէն Ալեքսանդրապոլի տեղական իշխանութեան մարմինները թուրքական բռնակալման վեց ամիսներին, միջնորդ հանդիսանալով հայ բնակչութեան եւ թուրք զինուորականների միջեւ, փորձել են հնարաւորութեան սահմաններում պաշտպանել խաղաղ բնակչութեան շահերը, զսպել թուրքական բռնութիւններն ու կամայականութիւնները:

Պատահական չէ, որ ժամանակակիցները բարձր են գնահատել թուրքերի հետ գործակցելու միջոցով հայ բնակչութեան ֆիզիկական գոյութիւնն ապահոված գործիչներին: Մասնաւորապէս, 1918ին թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլում Հայաստանի Հան-

բապետութեան Արտգործնախարարութեան ներկայացուցիչ Խոյեցեանն Արտաքին Գործերի նախարարին ուղղած իր 1918 Դեկտեմբերի 4ի զեկուցումում նշում է. *«Ի վերջոյ չեմ կարող մի երկու խօսք չասել Ալէքսանդրապոլի քաղաքային վարչութեան եւ մասնաւորապէս քաղաքագլուխ Լ. Սարգսեանի մասին: Երբ նախկին քաղաքային վարչութիւնը հեռացաւ քաղաքից ու մնացողներից ամէն մէկը ահով էր դիտում մօտիկ ապագային, սպասելով անխուսափելի կոտորածի, ու կորուստը մնացածների, քաղաքագլուխ Լեւոն Սարգսեանը եւ Մկրտիչ Ղազարեանը, որոնց անձնական շատ քիչ բան էր կապում քաղաքի հետ միայն նահատակուող անգլուխ մնացած ժողովրդին իրենց ուժերի չափ օգնելու համար, մնում են քաղաքում: Այն՝ ինչ նրանք կրում են այս վեց ամսում, այս կամայականութեան եւ բռնութեան շրջանում, նրանց տոկունութիւնը, նրանց յուժկու եւ համարձակ բողոքը այն բոլորի դէմ ինչ նոյնիսկ նրանց իրաւասութիւնից վեր էր եւ աւելի լայն բնոյթ էր կրում, այն անձնազոհ պաշտպանութիւնը ժողովրդի շահերի, որի պատճառով նրանք շարունակ հալածուել են եւ նոյնիսկ վտանգի ենթարկել իրենց կեանքը ու միայն հրաշքով կարողացել են այսօր խաւարի իշխանութիւնից դուրս գալ ու դուրս բերել իրենց խնամքին յանձնուած ժողովուրդը եւ հանգիստ սրտով դիմաւորել հայ զինուորներին եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը, այս բոլորը՝ նրանց անձնազոհութիւնը, ազնուութիւնը, կորովն ու համարձակութիւնը միայն խորին յարգանքի զգացմունք է զարթնեցնում իմ մէջ ու այս բոլորի վրայ եմ դարձնում կառավարութեան ուշադրութիւնը:*

Քաղաքային ինքնավարութիւնը խոշոր օգնութիւն է ցոյց տուել նաեւ զանազան շրջաններից փախած գաղթականներին, որոնք ապաստանել են քաղաքումս, բանալով նրանց համար որբանոց, հանրակացարան եւ այլն: Այս ձեռնարկութիւններին աջակցելու համար նա արել է դիմումներ բոլոր քաղաքացիներին եւ հասարակական հիմնարկութիւններին: Ներկայացուցչութիւնս միջոցներ չունենալու պատճառով չի կարողացել արձագանքել այդ կոչերին»[39]:

1919 Յունուարի 15ի արտակարգ նիստում քաղաքային վարչութիւ-նը, յարգելով տիֆից մահացած Մկրտիչ Ղազարեանի յիշատակը, որո-շում է նրան յուղարկաւորել Պատուոյ Բլուր կոչուող գերեզմանատանը[40]: 1919 Ապրիլի 16ի նիստում Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է Ղազարեանի ընտանիքին թոշակ նշանակել, իսկ նրա օրագիրը հրատարկել, որպէս յատուկ բրոշիւր եւ վաճառել հատը երկու ռուբլով, եւ հասոյթը յատկացնել նրա երեխաներին[41]:

Աւելի ուշ՝1919 Յունիսի 3ին, Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը որոշել է Լեւոն Սարգսեանին Ալեքսանդրապոլի

պատուաւոր քաղաքացու կոչում տալ, նրա անունով անուանակոչելով քաղաքի հիւանդանոցներից մէկը[42]:

Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ներկայացուցիչ Խոյեցեանի ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղուած 1918 Հոկտեմբերի 4ի գրութեան մէջ, որտեղ վերջինս առաջարկում է վիճակագրական տեղեկութիւններ հաղորդել Լոռու եւ Փամբակի շրջանների վերաբերեալ, տեղեկացնում է, որ այդ տուեալները տրամադրուել է Գեղամ խան Սարգսեանի կողմից: *«Գեղամ խան Սարգսեանը,*- ասուած է այդ գրութեան մէջ,- *Ուղիբէգ գիւղացի, որը շնորհիւ արաբ, ֆարս, թուրք լեզուներին ծանօթ լինելուն օսմանեան կառավարութեան կողմից նշանակուած է Փամբակի եւ Լոռիի շրջանների նայող միւդիր եւ ամէն կերպ աշխատում էր, ըստ հնարաւորութեան, թեթեւացնել այդ շրջանների ժողովրդի դրութիւնը»*[43]: Մասնաւորապէս Ղոլղաթում 1918ին սպանուել են ընդամէնը երկու հոգի, ըստ գիւղացիների յիշողութիւնների, նրանց փրկել է անխուսափելի մահից հենց Գեղամ փաշան: Թուրքերն անցնելով գիւղի տներից մէկի մօտով, լսել են Անդրանիկի անունը եւ մտածելով, որ Անդրանիկն այդ գիւղում է՝ որոշել են սպանել գիւղի ողջ բնակչութեանը: Մինչդեռ ղոլղաթցի Տէր-Սարգսեանը կանչելիս է եղել իր որդուն, որի անունը Անդրանիկ է եղել: Գեղամ փաշայի միջնորդութեամբ են միայն գիւղի բնակիչները փրկուել անխուսափելի մահից[44]:

Յետագայում, երբ թուրքական վտանգն արդէն չկար, հասարակական գիտակցութեան մէջ սկսեցին արմատաւորուել թուրքերի դէմ չկռուելու, նրանց հետ գործակցելու համար ալեքսանդրապոլցիներին մեղադրելու միտումները: Իսկ պատմագիտութեան մէջ փորձեր չարուեցին գիտականօրէն ուսումնասիրել այդ երեւոյթի պատճառները: Մասնաւորապէս 1930ականների քաղաքական բռնաճնշումների ենթարկուած պետական եւ կուսակցական գործիչներին ուղղուած մեղադրանքների թւում էին՝ թուրքերի հետ գործակցելու, նրանց օգտին լրտեսութիւն անելու, ժողովրդի թշնամի լինելու անհիմն մեղադրանքները[45]:

Թէեւ միքանի տարի անց այդ անհիմն մեղադրուածները արդարացուեցին, բայց պատմագիտական մտքի եւ հասարակական գիտակցութեան մէջ շարունակուեցին կարծրատիպերի տեսքով մնալ այդ մեղադրանքները, բայց արդէն ոչ թէ առանձին անձանց, այլ Ալեքսանդրապոլի գաւառի բնակչութեան հանդէպ:

Մինչդեռ միջազգային բարդ պայմաններում եւ հայոց պետականութեան կայացման շրջանում ապրող Ալեքսանդրապոլի գաւառի բնակչութիւնը, ենթարկուելով թուրքական անօրինակ բռնութիւններին, մեծագոյն ողբերգութիւն է ապրել, փորձելով դիմակայել թուրքական յատուկ

մշակուած ցեղասպան քաղաքականութեանը, պայքարել իր ֆիզիկական գոյութեան պահպանման համար:

Ինչպէս իրաւացիօրէն նկատել է Թոմաս Մըկոլէյը *«Մի ամբողջ կարգ մարդկանց մեղադրել, թէ նրանք հայրենասէր չեն, նոյն տրամաբանութիւնն է, որով գայլը ղեկավարում է գառան հանդէպ: Դա նոյնն է, ինչ գետաբերանը մեղադրել նրա ակունքները թունաւորելու մէջ»*[46]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

---

[1] Հրանտ Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918թ*, Երեւան, Բարձրագոյն Դպրոց, 1997, էջ 81:

[2] Իր դաշնակից Գերմանիայի աջակցութեամբ Օսմանեան Թուրքիան 1918 Մարտի 3ին հասնում է Բրեստ Լիտովսկի Պայմանագրի կնքմանը, որի համաձայն Ռուսաստանը պարտաւորւում էր զիջել Բաթումի, Արդահանի, Կարսի սանջակները: Անդրկովկասի կառավարութիւնը, երկրամասը անջատուած համարելով Ռուսաստանից, չի ընդունում Բրեստի Պայմանագիրը եւ հրաժարւում է յանձնել իր տարածքները: Թուրքական զօրքերը Տրապիզոնի բանակցութիւնների ընթացքում, շարունակելով ռազմական գործողութիւնները, զէնքի միջոցով գրաւում են Բրեստի Պայմանագրով իրենց անցած տարածքներ: Իսկ երբ Անդրկովկասի կառավարութիւնը ընդունում է Բրեստի պայմանները, թուրքերը խախտելով այն, ներխուժում են Արեւելեան Հայաստան, գրաւում Ալեքսանդրապոլը եւ Երեւանի Նահանգի այլ տարածքներ:

[3] Ինչպէս՝ Սէյմի եւ կառավարութեան հայ անդամներ, Ազգային Խորհրդի, կուսակցութիւնների ներկայացուցիչներ եւ հրաւիրուած անձեր, որոնց շարքին՝ Սիմոն Վրացեան, Աւետիս Ահարոնեան, Ալեքսանդր Խատիսեան, Ռ. Տէր-Մինասեան, Յ. Չոլախեան, Յովհաննէս Քաջազնունի, Արամայիս Երզնկեան, Մ. Յարութիւնեան, Ա. Զոհրաբեան, Կ. Ղազարեան, Ա. Շախաթունեան, Զօրավար Նազարբեկով, Լեւոն Սարգսեան, Ա. Խոնդկարեան եւն.:

[4] *Համահայկական Խորհրդակցութիւններ (1912-1920թթ.), Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողուածու*, խմբ. Ա. Վիրաբեան, Երեւան, 2004, էջ 307-332:

[5] Աւետիսեան, *Հայկական Հարցը*, էջ 198-199:

[6] ՀԱԱ, ֆ. 57, ց.5,գ. 187, թ. 1-41:

[7] Ալեքսանդրապոլի թեմի փոխանորդ Արտակ վարդապետը «Մի Պատմական Էջ Տաճիկների Կողմից Ալեքսանդրապոլը Գրաւելու Վերաբերեալ» յուշագրութեան մէջ քաղաքից իր հեռանալը հիմնաւորում է դրանով, որ իր մօտ էր գտնւում Հառիճի վանքի եւ դպրոցի հոգաբարձութեան 30,000 ռուբլին, ինչպէս նաեւ Կարսի հոգեւոր կառավարութեան 1500 ռուբլին եւ Ալեքսանդրապոլի հոգեւոր կառավարութեան դրամները, ընդհանուր գումարով՝ 40,000 ռուբլի:

[8] Մէկ վերստը հաւասար է 1067 մետրի (Անդրանիկ Վրդ. Կոանեան, *Բառգիրք Հայերէն Լեզուի*, Պէյրութ, 1998, Շիրակ Հրատ., էջ 439):

[9] Ղազարեան Մկրտիչ Մինասի (1867-1919), Շուշիի Սեմինարիայի հայոց լեզուի ուսուցիչ: Սովորել է Ստրազբուրգի Համալսարանի Արեւելագիտութեան Բաժնում: Այնուհետեւ տեղափոխուել է Ռուսաստան եւ զբաղուել մանկավարժութեամբ: Եղել է Արդութեան Դպրոցի կառավարիչ, վերատեսուչ, Ալեք-

սանդրապոլի քաղաքային վարչութեան անդամ 1918 Մայիս-Դեկեմբերին, քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նախագահ՝ 1918 Մայիս-1919 Յունուար: Մահացել է տիֆից 1919 Յունուարի 16ին:

[10] ՀԱԱ, ֆ. 105, ց.1,գ. 2768, թ.51. նաեւ՝ *Փաստաթղթեր 1918թ. Մայիսին Թուրքական Բանակի Կողմից Ալեքսանդրապոլի Գրաւման Եւ Քաղաքային Ինքնավարութեան Նոր Մարմինների Ստեղծման Վերաբերեալ*, կազմ. Կ. Ալեքսանեան, Երեւան, Հրատ. Բանբեր Հայաստանի Արխիւների, 2011, թիւ 1, էջ 27:

[11] Սարգսեան Լեւոն Դաւիթի, 1862-1927, Ալեքսանդրապոլի Առեւտրական Դպրոցի վերատեսուչ, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ 1918 Մայիս-1919 Յունիս, Առեւտրական Դպրոցի վերատեսուչ 1919 Յունիս-1920 Նոյեմբեր, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ 1920 Նոյեմբեր 7-17, Ալեքսանդրապոլի Շրջանային Յեղկոմի Նախագահ 1921 Ապրիլի 23ից Մայիսի կէսերը, 1921-1922՝ ՀՍԽՀ ներկայացուցիչ Կարսում ապա Թաւրիզում:

[12] ՀԱԱ, ֆ. 105, ց.1,գ. 2711, թ. 5:

[13]ՀԱԱ, ֆ. 200, ց.1,գ. 126, թ.90-96:

[14] ՀԱԱ, ֆ. 105, ց.1,գ. 2710, թ.51:

[15] ՀԱԱ, ֆ. 105, ց.1,գ. 2710, թ.5:

[16]ՀԱԱ, ֆ. 200, ց.1,գ. 125, թ.8:

[17] ՀԱԱ,ֆ.105, ց.1, գ.2768, թ.51. նաեւ՝ Ալեքսանեան, *Փաստաթղթեր*, էջ 27:

[18] Ա. Խաչատրեան, *Արեւելահայ Եւ Թուրք Դիւանագիտական Յարաբերութիւնները*, կազմ. Ղազախեցեան եւ ուրիշ., Երեւան, Հրատ. Հայաստանի Ազգային Արխիւ, 2010, էջ 134:

[19] ՀԱԱ, ֆ. 200, ց.1,գ. 125, թ. 8:

[20] ՀԱԱ, ֆ. 57, ց.5,գ. 187, թ. 1-41:

[21] *Զանգ*, 17/4/ Մայիսի 1918, թ. 34. նաեւ՝ Մանուկեան Ա., *Փաստաթղթերի Հաւաքածու*, խմբ. Ա. Վիրաբեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2009, էջ 305:

[22] ՀԱԱ, Ֆ.289, ց.1,գ.10, թ.1. նաեւ՝ Մանուկեան, *Փաստաթղթերի*, էջ 306:

[23] *Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1914-1922թթ, Փաստաթղթերի Հաւաքածու*, կազմ. Կ. Ալեքսանեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2012:

[24] ՀԱԱ, ֆ. 200, ց.1,գ. 126, թ. 44:

[25] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.126, թ. 46-47:

[26] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ.2710, թ. 8:

[27] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ.2710, թ. 8:

[28] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ.2768, թ. 166:

[29] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2768, թ. 166

[30] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.126, թ.90-96:

[31] ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ.125, թ 8:

[32] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2758, թ. 20:

[33] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ.2710, թ. 20:

[34] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 3:

[35] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2758, թ. 29:

[36] Խաչատրեան, էջ 31:

[37] Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչութիւնը Ալեքսանդրապոլում հաստատուել է 1918 Սեպտեմբերի 4ին եւ գործել մինչեւ 1921 Յունուարի 25ը: Մինչեւ Փետրուարի 1ը՝ լուծարուելը, այն շարունակել է տեղի թուրք ներկայացուցչի միջոցով յարաբերութիւններ պահպանել ու բանակցութիւնների մէջ լինել օսմաեան կառավարութեան հետ, փաստօրէն հանդիսանալով բոլոր նախարարութիւնների տեղական ներկայացուցիչը:

[38] ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ.97, թ 26:

[39] ՀԱԱ, ֆ.105, ց. 1, գ.126, թ 90-96:

[40] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 163:

[41] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 198-199:

[42] ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2711,թ.1:

[43] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.125, թ.18:

[44] Սասունիկ Վիրաբեան, *Շիրակի Գեղանիստ*, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2013, էջ 290:

[45] ՀԱԱ, ֆ. 1191, ց.9, գ.125, թ. 1681, թ. 1:

[46] Թոմաս Բաբինգտըն Մըկոլէյ (1800-1859), անգլիացի պատմաբան, քաղաքական գործիչ:

LOCAL GOVERNANCE IN THE ALEXANDROPOLE DISTRICT DURING TURKISH MILITARY OCCUPATION (MAY-DECEMBER 1918) (SUMMARY)

KARINE ALEXANIAN
karineal@mail.ru

In early March 1918 Ottoman Turkey and Russia suigned the Brest Litovsk Agreement whereby Russia withdrew from the Batumi, Gars and Ardahan regions. The Transcaucasion Federation rejected the agreement arguing that Russia had no legitimate right in ceede those territories to Turkey.

After occupying the said areas, Turkey continued its advance on the Republic of Armenia and occupied the Alexandrople district for six months. A large number of the native Armenians as well as Western Armenian regugees fled the area to the tiny Eastern Armenian hinterland. Those who stayed faced the challenge of life and death under Turkish military rule.

In order to maintain law and order in the occupied district of Alexandropole and give legitimacy to their acts, the Turks set up a local government, which was to run the affairs of the occupied district. The local government bodies of Alexandrople tried to address Turkish attrocities by collaborating with the occupying authorities and supporting the Armenian population, which was left at the mercy of the Turks.

This Turkish-Armenian collaboration was mutually beneficial: it legitimized Turkish anti-Armenian policy and, at the same time, partly secured the survival of the Armenians in the district.